

ԲԱՆԱՎԵՃ

Дискуссия – Discussion

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԾՈՒՐՁ

Բանալի բառեր՝ Մատենադարան, հիշատակարան, գիրք, Լ. Խաչիկյան, Մայր ցուցակ, ԺԴ դար, գրախոսություն:

«Բանբեր Մատենադարանի» պարբերականում լույս է տեսել Մատենադարանի աշխատակիցներ՝ բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիթ Հովսեփյանի և արվեստագիտության թեկնածու Դավիթ Ղազարյանի հեղինակած Գրախոսությունը¹, որը վերաբերում է Մատենադարանի մեկ այլ հրատարակության՝ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար», մասն Ա. (1301-1325 թթ.), կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, Երևան, 2018:

Ինչպես հայտնի է, 1950 թ. Լևոն Խաչիկյանի հրատարակած «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» հատորյակը մեր ձեռագրերի հիշատակարանների առաջին ժողովածուն է եղել: 2018 թ. լույս տեսած ժողովածուն, որն ընդգրկում է ԺԴ դարի առաջին քառորդը, ներառում է Լևոն Խաչիկյանի հրատարակության այդ ժամանակահատվածի հիշատակարանները (դրանց մի մասը լրացված են «Փառքերով» և այլ հատվածներով), նոր հիշատակարաններ,

¹ Լիլիթ Յովսեփյան, Դավիթ Ղազարյան, «Իխտարկումներ հայերեն ձեռագրերի ԺԴ. դարի առաջին քառորդի յիշատակարանների հատորի առիթով», *ՔՄ* № 28, 2019, էջ 390-406: Այս նյութը գրվել է Մատենադարանի գլխավոր ավանդապահ և Ձեռագրագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Գևորգ Տեր-Վարդանյանի առաջարկությամբ և սկզբնապես ներառված էր նրա խմբագրությամբ հրատարակության պատրաստված, Լևոն Խաչիկյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված միջազգային գիտաժողովում (28-30 հունիսի, 2018 թ.) կադրացված զեկուցումների «Լևոն Խաչիկյան. Հարյուրամյակ» վերագրով ժողովածուի մեջ: 2019 թ. սեպտեմբերի 7-ին կայացած Մատենադարանի գիտախորհրդի նիստում որոշվեց նյութը դուրս բերել ժողովածուից, քանի որ այն չէր ներկայացվել գիտաժողովում: Գրախոսությունն առանց փոփոխության զետեղվել է Մատենադարանի «Բանբերում»: Նրա վերնագիրը մեր շարադրամբում հանախ չկրկնելու համար կոչում ենք Գրախոսություն (որպես հատուկ անուն), իսկ կատարված մեջբերումներից հետո էջը նշում ենք մեջբերման ավարտին՝ փակագծերով:

որոնք ժամանակին լրացրել է Արտաշես Մաթևոսյանը (1922-2004), և վերջին տարիներին լույս տեսած ցուցակներից քաղված նոր միավորներ, որոնք ամբողջացնելով՝ գիրքը հրատարակության է պատրաստել պատմական գիտությունների թեկնածու Արփենիկ Ղազարոսյանը: Տողերիս հեղինակն այդ հրատարակության խմբագիրն է:

Սույն գրքին նվիրված Գրախոսության սկզբում ընդհանուր խոսքով նշվում է հիշատակարանների հրատարակության կարևորությունը և տրվում այդ գործի նախընթաց համառոտ պատմությունը: Այնուհետև երեք կետով դրվատական գնահատական է տրվում նոր հրատարակությանը, որին հաջորդում են դիտողությունները: Դրանց մեջ մատնանշված են որոշ էական բացթողումներ, բայց կան նաև մանր բնույթի դիտողություններ: Օրինակ՝ նշվում է. «Ներկայ հատորում 1950 թ. հրատարակութեան մի շարք վրիպակներ ուղղուած են, ինչը անկասկած, ուրախալի է: Սակայն կան նաև վրիպակներ, որոնք երկուսում էլ առկայ են (օրինակ՝ Հ^մ 93 «բարեձեւութիւն»ը դարձել է «բարեձեւութիւնն», Հ^մ 221 «նեղութեամբ»ը՝ «նեղութեամբ», «Որոց հատուցէ նոցին ըստ գործոց նոցին»ը՝ «Որոց հատուցէ նորին ըստ գործոց նոցին»)» (էջ 401) և այլն: Այս հատվածը հատկանշական է այն բանով, որ Գրախոսության հեղինակները հիշատակարանների ձեռագրական բնօրինակները համեմատել են ոչ միայն գրախոսվող գրքի, այլև Լ. Խաչիկյանի 1950 թ. հրատարակած «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների» համապատասխան միավորների հետ: Այնքան էլ հասկանալի չէ դրա իմաստը, որովհետև տպավորություն է ստեղծվում, թե գրախոսվում է նաև 70 տարի առաջ տպագրված գիրքը:

Ովքեր հետաքրքրվում են Գրախոսության մեջ նշված՝ ԺԴ դարի հիշատակարանների Ա հատորում նկատված թերություններով, կարող են այդ մասին ընթերցել Մատենադարանի «Բանբերում»: Ընդհանուր առմամբ, դրանք հիմնական մասով ճիշտ դիտողություններ և սրբագրական բնույթի ուղղումներ են: Սակայն Գրախոսությունը նաև որոշակի ուղերձ է պարունակում, և հատկապես այդ առիթով է սույն հրապարակումը:

Գրախոսության սկզբում շեշտվում է այն միտքը, որ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի» բազմահատորյակում «ձեռագրերի յիշատակարանները տպագրուած են ամբողջութեամբ՝ առանց յապատումների, եւ կարող են հիմք լինել ո՛չ միայն յիշատակարանների նոր հատորների կազմութեան, այլեւ արդէն հրատարակուածների սրբագրման» (էջ 392): Իսկ գլխավոր ասելիքը վերջաբանի մեջ է. «...մեծածաւալ եւ բազմաթիւ նրբութիւններ ունեցող այսպիսի աշխատանքները կատարելապէս անթերի լինել չեն կարող, բայց նաեւ թերութիւնները նուազագոյնի հասցնելն անհնար չէ: Իսկ սրա համար, կարծում ենք, գիւտեր անելու հարկ չկայ. պէտք է կիրառել այն նոյն եղանակը, որ մեծագոյն յաջողութեամբ գործադրուած է մեր Մայր ցուցակի 2.

հատորից սկսած: Նկատի ունենք ձեռագրերի երկաստիճան՝ առաջին եւ երկրորդ նկարագրութիւնների սկզբունքը, որի շնորհիւ երկրորդը սրբագրում է առաջին նկարագրողի մանր կամ մեծ վրիպումները, լրացնում առաջինի աշխատանքից յետոյ ի յայտ եկած իրողութիւններին վերաբերող ծանօթութիւնները եւ այլն:

Մի այլ հանգամանք. յիշատակարանների բնագրագիտական մշակումը Մայր ցուցակի համար արուող նկարագրութիւնների աշխատանքի մէկ երրորդ մասն է (միւս երկուսն են՝ ձեռագրի արտաքին յատկանիշների եւ բովանդակած բնագրերի նկարագրութիւնը), այսինքն՝ մեր Ձեռագրագիտութեան բաժնի աշխատակիցները կատարելապէս տիրապետում են յիշատակարանների մշակման գրեթէ բոլոր նրբութիւններին, նաեւ՝ առաջացող կնճռոտ հարցերը միշտ լուծում են խմբական եղանակով՝ խորհրդակցելով, ուստի վստահ ենք, որ նրանցից մէկի աշխատակցութեան շնորհիւ հայերէն ձեռագրերի ԺԴ. դարի յիշատակարանների յաջորդ երեք հատորները գերծ կլինեն վերը ներկայացուած եւ չներկայացուած տարատեսակ թերութիւններից» (էջ 405):

Այսպիսով, էթե կարճ ձեւակերպենք այս ուղերձը, ապա ասվում է, որ Մայր ցուցակի վրա աշխատողները, որ «մեծագոյն յաջողութեամբ» կիրառված երկաստիճան նկարագրութեան սկզբունքով կատարում են հիշատակարանների հրատարակութիւնը ցուցակում, «կատարելապէս տիրապետում են յիշատակարանների մշակման գրեթէ բոլոր նրբութիւններին», կարող են հաջող կերպով զբաղվել նաև հիշատակարանների նոր հատորների կազմութեամբ: Նաև առաջարկվում է, որ ԺԴ դարի հիշատակարանների հաջորդ երեք հատորների կազմմանը մասնակցի այդ բաժնի մի աշխատող, որի շնորհիւ աշխատանքը գերծ կլինի թերութիւններից:

Իհարկե, թերութիւններից գերծ հրատարակութիւններ ունենալը բոլորիս ցանկութիւնն է: Բայց նախ տեսնենք, թե ցայժմ հիշատակարանները ինչպես են հրատարակվել Մայր ցուցակի հատորներում: Յավոք, անգամ մակերեսային դիտարկումը բացահայտում է այդ դաշտում առկա մի շարք ակնառու թերութիւններ: Ընդ որում, դրանք ոչ թե առանձին դեպքեր են, այլ սխալների տեսակներ, որոնք ստորև կներկայացնեմ խմբավորված: Հասկանալի է, որ ես Մայր ցուցակի 10 հատորն ամբողջութեամբ չեմ կարդացել հիշատակարաններում սխալներ գտնելու նպատակով, այլ հիմնականում աշխատանքի բերումով հանդիպածների հիման վրա եմ կատարում դիտողութիւններս:

1. Մայր ցուցակից դուրս մնացած հիշատակարաններ

Այս խնդրին առնչվել եմ Սամվել Անեցու ժամանակագրութեան ձեռագրերի ուսումնասիրութեան ժամանակ: Դրանցից մեկը, որն օգտագործել է Ա. Տեր-Միքեյլանն իր կազմած բնագրում, որպես ժ օրինակ, Մատենադարանի թիվ 1484 ժողովածուն է (էջմիածնի նախկին համարը՝ 1672): Գրիչը Հովհաննեսն է, ժա-

մանակը՝ 1666 թ.: Բագրատունյաց անկման կապակցությամբ Հայոց թագավորների տարիների սյունակը դադարեցնելու մասին Սամվել Անեցու գրած փոքրիկ ողբի հատվածում գրիչը հիշատակարան է գրել իր ապրած ժամանակի մասին: «Արդ՝ ընդ այս խափանած գաւազանիս հարկ եղեւ եւ զմեզ տարակուսանքս գծագրել, որ դառն էր ժամանակս... վանորայքս ամէնն աւիրեցան եւ չկայ տեղի գնալոյ...: Բայց զհանդիպողքդ սմին... մեղաց թողութիւն հայցեցէք...» և այլն (էջ 173բ): Հովհաննէս գրչի այս հիշատակարանը դուրս է մնացել ձեռագրացուցակից²: Սակայն, զարմանալիորեն, Մայր ցուցակում տեղ չի գտել նաև Հովհաննէս գրչի մի շափածո հիշատակարանը (էջ 175ա), որը դեռ 1893 թվականին հրատարակել է Արշակ Տեր-Միքելյանը³: Փաստորեն, գրչի երեք հիշատակարանից Մայր ցուցակում հրատարակվել է միայն մեկը:

Վերջերս իր ելույթներից մեկի ժամանակ Գ. Տեր-Վարդանյանն ափսոսանքով նշեց մի կարևոր հիշատակարանի մասին, որը դուրս է մնացել Մայր ցուցակի Ա հատորից: Ձեռագրացուցակից դուրս մնացած ուրիշ հիշատակարանների մասին ինձ ասել են նաև Մատենադարանի այլ գիտաշխատողներ: Կարծում եմ, որ Ձեռագրագիտության բաժնի գիտաշխատողներն իրենք էլ գիտեն նման այլ օրինակների մասին:

2. Հիշատակարանի թերի հրատարակություն

Անի-Շիրակի ձեռագրերի ուսումնասիրության ժամանակ հանդիպեցի հիշատակարանի թերի ներկայացման մի զարմանալի օրինակի: Խոսքը 1219 թ. Հառիճի վանքում գրված ձեռագրի գլխավոր հիշատակարանի մասին է

յաղալթս ձեր եւ զվերայգրեալսս՝ զհայր Պետրոս եւ
զՔրիստափոր եւ զՍոսթենէս եւ առաւել զնոր հայրս
/// (9–10 տող անընթեռնելի) եւ զմեծ իշխանն մեր ///
(1 բառ անընթեռնելի) Վարհամ, որ զժամատունս շի-
նեաց ի դրան Կաթողիկէիս եւ զորդիս իւր՝ զԻշխանն
եւ զՍարգիս, պահեսցէ խաղաղութեամբ մինչ ի խորին

Նկ. 1. Մայր ցուցակ, հ. Գ, էջ 1125:

² Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, կազմեցին՝ Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան, Երեւան, 2008, էջ 1397-1398: Այս և երկայուն շարվածով տպված Մայր ցուցակից կատարվող մյուս հղումներում կամ մեջբերումներում մենք «այունակի» փոխարեն նշում ենք «էջ»:

³ Սամուէլի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաւաղ արարեալ յառաջարանով, համեմատութեամբ, յաւելումներով եւ ծանօթութիւններով Արշակ Տեր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ ԺԹ:

Պետրոս, և զՔրիստափոր, և զ[Ս]ոսրբենես, և առաւել զնոր հայրս [մ]եր՝ զԳր[գ]որ վարդապետս զորդի Ա[բա]սայ՝ զա[ր]դարեա[լն] ամ]ե[ն]յայն ա[ռ]աքին[ու]թե[ամ]բ, և զայլ միաբան ե[զ]բարքսս՝ զքահանայսս և զկրան[աւ] որսս, և զժ[ե]րսս և զերիտասարդսս [յի- շե]ցէք յա[ղաւթս ձ]եր: Եւ [ո]րք յայսմ [սուրբ] ուխտս հա[ն]գու[սցէ] [յ]ատ և այլ[և]աբան յա[յ]այժմ, և որ զկնի [մ]եր հանգուսցէ, Քրիստոս Աստուած [զՏ]ոգիս նոցա ընդ ամենայն [սու]րբս իւ[ր] ամ]էն: Եւ զմեծ իշխանն մեր զ[բա]րեպաշտ Վարհամ, որ զժամատունս շինեաց ի դրան կաթողիկէիս, և զորդիսս իւր՝ զԻշխանն և զՍարգիս պա-

նկ. 2. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 114:

(ՄՄ ձեռ. 1382), որի վերջին հատվածում կան չվերծանված տողեր՝ «(9-10 տող անընթեռնելի)» բացատրությամբ, քիչ անց նաև՝ «(1 բառ անընթեռնելի)»⁴ (նկ. 1): Որքան մեծ էր զարմանքս, երբ դրանից հետո ԺԳ դարի հիշատակարանների ժողովածուն բացելով տեսա, որ այդ հատվածն այնտեղ վերծանված է ամբողջովին (նկ. 2)⁵: Դժվար չէ նկատել, որ հատվածը բավականին հետաքրքիր է, պարունակում է նաև Աբասի որդի Գրիգոր վարդապետի անունը, վերականգնված է բժախնդիր կերպով: Արդյո՞ք տարօրինակ չէ, որ Մատենադարանի 1984-ին հրատարակած հիշատակարանների ժողովածուի մեջ հատվածը կա, իսկ 2008-ին նույն հաստատության հրատարակած Մայր ցուցակում «գարձել է» անընթեռնելի: Չեմ բացառում, որ ձեռագրի նկարագրությունը կատարված լինի հիշատակարանների ժողովածուի հրատարակությունից առաջ, բայց չէ՞ որ ձեռագրացուցակի հրատարակության ժամանակ այն վաղուց տպված էր և, եթե չեմ սխալվում, գրքի մի օրինակն էլ դրված է ցուցակը կազմողների աշխատասենյակում: Մի՞թե դժվար էր այն բացել և գոնե հետաքրքրության համար տեսնել, թե արդյոք Ա. Մաթևոսյանը կարողացել է հիշատակարանի նշված հատվածը վերծանել:

3. Հիշատակարանների սխալ վերծանություն

Մատենադարանի ընթերցասրահում դրված Մայր ցուցակի 2 հատորը թերթելիս աչքովս ընկան ընթերցողներից մեկի նշումներն ու ուղղումները մի վերնագիր հիշատակարանի վրա (նկ. 3): Պարզելու համար, թե արդյո՞ք դրանք ամբողջովին ճիշտ են, պատվիրեցի համապատասխան հիշատակարանի թվայնացված պատկերը և պարզվեց, որ կատարված ուղղումները տեղին են:

⁴ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, Երևան, 1984, էջ 1125:

⁵ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 114:

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. 4ա-443բ [Յովհաննու Ապահանցու Սրբազնագործություն] 1. 4ա-5ա Յոքնամեղ ել/անարժանքս յամենայնի՝ Յովհաննես վարդապետի Իսպահանցու արարեալ եւ յօրհնակեալ զգիրս, որ կոչի Սրբազնագործութիւն, ի թվին հայոց մեծաց հազար հարիւր եւ քառասուն եւ հինգ (1695), եւ ըսկեալ յամենան Յոնկվարի ի մինն, ի փառս մարմնոյ եւ արեան Որդւոյն Աստուծոյ եւ ի խիստ ճաշակողացն զկենդանարար խորհորդն եւ մերձեցելոցն ի սուկալի յաստուածաճաշակութիւնն. օգնեալ՝ ամենագօր Սուրբ Հոգի Աստուած - երջանիկ է ջոկս եւ է կաճառս...

Արարեալ

Նկ. 3. Մայր ցուցակ, հ. 2, էջ 627:

վերջավորուելունն է «թե», ուստի պետք է բացվի «Արբազնագործութեան» ձևով: Թվականի հարցում պարզ վրիպման հետ գործ ունենք, 1145-ը նշված է 1695, պետք է լինի 1696, և վերջապես «ի խրատ ճաշակողացն» արտահայտությունը տպվել է «ի խիստ ճաշակողացն»⁶:

Պետք է ասել, որ նման վրիպումները հատկանշական չեն Մայր ցուցակի համար, այնուամենայնիվ, առ ի տեղեկություն նշենք, որ սույն ձևագրի նկարագրողը Գրախոսության հեղինակներից կլիթ Հովսեփյանն է:

Հիշատակարաններում կամ այլ բնագրերում եղած սխալները երբեմն էական չեն, քանի որ որևէ բառի թերի վերծանության ժամանակ հմուտ հետազոտողը կարող է զգալ սխալը: Բայց կան դեպքեր, երբ վրիպման մասին անհնար է կռահել: Օրինակ՝ 1613 թ. մի կարճ հիշատակարանում (ՄՄ ձեռ. 1809) Մարտիրոս սարկավազն իրեն կոչում է «աշակերտ վարդապետի»⁷: Եթե Մայր ցուցակում այս մատյանի նկարագրողը (հատոր 2), հիշատակարանին անդրադառնալով, ընդամենը վերցնել է Վ. Հակոբյանի և Ա. Հովհաննիսյանի կազմած ժէ դարի հայերեն ձևագրերի հիշատակարանների ժողովածուի առաջին հատորը, ապա կտեսներ, որ վրիպել է վարդապետի անունը, որը Մեսրոպ է (սխալագրությունը՝ Մերսոպ)⁸: Փաստորեն, ժէ դարի սկզբներին ապրած Մեսրոպ վարդապետի անունը, որը չի նշվում ձևագրի մեկ այլ հիշատակարանում, դուրս է մնացել Մայր ցուցակից, մինչդեռ առկա է նույն դարի հիշատակարանների ժողովածուի մեջ:

⁶ Մայր ցուցակ հայերէն ձևագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. 2., խմբագրութեամբ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2012, էջ 627:

⁷ Նույն տեղում, էջ 39:

⁸ Հայերեն ձևագրերի ժէ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հ. Ա, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 480: Մայր ցուցակում տպված այս հիշատակարանում, որը 2 տող է, բնագրի համեմատությամբ կան նաև այլ տարբերություններ (նմուտ. նույն տեղում):

ՄՄ 1935 ձեռագիրը Հովհաննես Ապահանցու մի ինքնագիր աշխատությունն է, որի սկզբում է այդ նախագիր հիշատակարանը: Քանի որ լուսանկարը տեղադրված է, կարիք չկա այն մեջբերելու, սխալ վերծանություններն են՝ «յօրինեալ զգիրս»-ը դարձել է «յօրինակեալ...», հաջորդ բառը ցուցակում վերծանված է «Արբազնագործութիւն», բայց վերջում համառոտագրված

Այս թեման եզրափակենք՝ անդրադառնալով ԺԳ դարի մի հիշատակարանի: Մայր ցուցակ Զ հատորում ՄՄ 1874 ձեռագրի (գրված Վանում, 1391 թ.) սկզբնական նկարագրությունը ձեռագրի հետ համեմատել ու սրբագրել է Դավիթ Ղազարյանը (Գրախոսություն մյուս հեղինակը): 368ա-368բ էջերի հիշատակարանում բուն ձեռագրի համեմատությամբ 6 տարբերություն կամ վրիպում կա⁹: Դրանցից առավել ցավալին գրչի խոսքում՝ «եւ զվարպետն իմ՝ զԾերուն քահանայ յիշեցէք» հատվածի հրատարակումն է «զվարդապետն իմ՝ զԾերուն քահանայ»¹⁰ ձևով, որը ոչ միայն իմաստային փոփոխման է հանգեցրել, այլև այստեղ անհետացրել է «վարպետ» բառը, որը դրա վաղ կիրառություններից մեկն է (վիմագրերում այն առաջին անգամ հանդիպում է ԺԳ դարում՝ Հոռոմոսում՝ «...վարպետ Ֆրերս Կարնո քաղաքացի»)՝¹¹: Ի դեպ, հիշատակարանի այս հատվածը ձեռագրում ճիշտ է կարդացել ու ժամանակին ճիշտ հրատարակել Լ. Խաչիկյանը¹²:

Ինչպես տեսնում ենք, բերված երեք հիշատակարանն էլ Մայր ցուցակի Զ հատորից են, որտեղ կիրառված երկաստիճան նկարագրության եղանակին հետևելու խորհուրդ է տրվում Գրախոսության մեջ. «պէտք է կիրառել այն նոյն եղանակը, որ մեծագոյն յաշողութեամբ գործադրուում է մեր Մայր ցուցակի Զ. Հատորից սկսած: Նկատի ունենք ձեռագրերի երկաստիճան՝ առաջին եւ երկրորդ նկարագրութիւնների սկզբունքը, որի շնորհիւ երկրորդը սրբագրում է առաջին նկարագրողի մանր կամ մեծ վրիպումները» (էջ 405): Փաստորեն, երկաստիճան նկարագրությունից հետո էլ դեռևս ուղղելու բավական բան է մնում:

4. Հիշատակարանի անհարկի մասնատում

2017 թ. լույս տեսած Նորավանքի վիմագրերին և հիշատակարաններին նվիրված իմ գրքի նյութերը հավաքելիս առնչվեցի Մայր ցուցակում հիշատակարանի անպատեհ մասնատման մի օրինակի: Խոսքը Մատենադարանի թիվ 2603 ժողովածուի մասին է, որի ստացողը Ստեփանոս Օրբելյանն է: Այստեղ 224ա էջում մի հիշատակարան կա, որի սկզբում ասվում է. «Ձգեղեցիկ ծաղիկն եկեղեցոյ և զՔ(րիստո)սապսակ նորընծա ս(ուր)բ րաբունին զՍտեփ(աննոս) յիշեցէք...» և այլն, իսկ շարունակության մեջ՝ «Ընդ նմին զգառածեալս մեղաւբ

⁹ Մայր ցուցակ, հ. Զ., էջ 312-313: Այդ հիշատակարանի ուղղումներով էջերը ես տվել եմ Դավիթ Ղազարյանին: Սխալներ ու վրիպակներ կան նաև այս հատորի այլ հիշատակարաններում, օրինակ՝ ՄՄ 1980 ձեռագրի (գրված Երզնկայում, 1391 թ.) հիշատակարանում բուն ձեռագրի համեմատությամբ 8 տարբերություն՝ սխալ կամ վրիպակ կա. «ի գաւառէն»՝ «ի»-ն բաց է թողնված, «Պէկթաւուրին» անվան մեջ երեք տեղում դարձյալ «ի» տառը չկա, տպված է «գեղէն», ձեռագրում՝ «գեղջէն» և այլն (նույն տեղում, էջ 819-821):

¹⁰ Մայր ցուցակ, հ. Զ., էջ 313:

¹¹ Horomos monastery: Art and History, Edited by E. Vardanyan, Paris, 2015, p. 478.

¹² ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 588:

զանարժան ծրիչս Զաբէոս...»: Մայր ցուցակում (հատոր Ը) հիշատակարանը երկու մասի է բաժանվել, երկրորդը բերվել է առաջ, նշվում է 224ա էջի դիմաց, որին հաջորդում են այլ հիշատակագրություններ՝ 294բ, 48բ, 157բ (ի դեպ, այստեղ սկզբում նշված է «ստացողի», իրականում գրչի հիշատակարան է), որից հետո կրկին՝ 224ա՝ (ստացողի), և բերվում է վերոնշյալ հիշատակարանի առաջին մասը¹³: Ակնհայտ է, որ սա գրչի հիշատակարանն է, որտեղ նա սկզբում նշում է ստացողին, իսկ հետո՝ «Ընդ նմին»՝ նաև իրեն: Բնականաբար, սույն հիշատակարանը հենց այս ամբողջական ձևով է հրատարակվել ԺԳ դարի հիշատակարանների ժողովածուի մեջ¹⁴: Թե ինչո՞ւ է Մայր ցուցակում այն «կիսվել», անհասկանալի է:

Ընդհանրապես, պետք է շեշտել, որ հիշատակարաններն ամեն մի ձեռագրում առանձին նյութ-միավորներ են, որոնք չի կարելի մասնատել որևէ հիմնավորմամբ:

Նշված ձեռագրի մասին ևս երկու դիտարկում կատարեմ: Նկարագրության հենց առաջին տողում գրված է. «ՍՏԱՅՈՂ Ստեփանոս, որդի Տարսայիճի»¹⁵: Անհրաժեշտ էր փակագծում ավելացնել «Օրբէլեան», քանզի հիշատակարաններից ակնհայտ է, որ ստացողը Սյունյաց մետրոպոլիտ, պատմիչ Ստեփանոս Օրբելյանն է:

Ձեռագրի 48ա էջի հիշատակարանը հետևյալն է. «Տէր Աստուած տացէ ի մաստուիթիւն և հանճար նորընծա սուրբ րաբունոյն, որդո մեծի իշխանին Տարսայիճին՝ Ստեփաննոսի, և թողցէ զանցանս մաւր իմոյ, որ և փոխեցաւ ի Քրիստոս»¹⁶: Հիշատակարանի վերջում «փոխեցաւ» բառը կրճատ է գրված՝ «փոխ», որը Մայր ցուցակում նկարագրողը լրացրել է «որ և փոխ[եցալ] ի Քրիստոս»¹⁷: Նկատենք, որ հիշատակարաններում «որ և փոխ[եցալ]» արտահայտություն չի կիրառվում, ճիշտը «որ և փոխեցաւ ի Քրիստոս» վերծանությունն է: Առաջին հայացքից սա մանրուք է, և գուցե չարժեք անդրադառնալ: Սակայն մտահոգիչն այստեղ այն է, որ ցուցակի երիտասարդ նկարագրողը հարկ չի համարել անդրադառնալ հազարից ավելի հիշատակարան հրատարակած ավագ մատենադա-

¹³ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Բ. Ը., խմբագրութեամբ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2013, էջ 664-665:

¹⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 794:

¹⁵ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Բ. Ը., էջ 663:

¹⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 794:

¹⁷ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Բ. Ը., էջ 664: Հիշատակարանի երկրորդ բառը վրիպակով է «Աստուած» գրված է փոքրատառով:

րանցու հրատարակութեանը: Ուստի զարմանալի չէ, որ Մայր ցուցակում այս հիշատակարանների մոտ չի նշված, որ դրանք հրատարակվել են ժԳ դարի հիշատակարանների ժողովածուի մեջ:

5. Հայտնի հիշատակարանի ու շրջանի ընդօրինակության ծանոթագրման բացակայություն

Հայտնի է, որ ուշ շրջանի ձեռագրերում երբեմն տեղ են գտնում նախագաղափար օրինակների կամ որևէ երկի թարգմանությունը վերաբերող հիշատակարաններ: Իրանցում պատահում են գրչական սխալներ, որոնք երբեմն իմաստային փոփոխությունների են հանգեցնում, ուստի ճիշտ կլինի, եթե Մայր ցուցակում նման հիշատակարանները մեջբերելիս նշվի, որ դրանք ունեն հրատարակված նախնական տարբերակ: Այդպիսի մի օրինակի առնչվեցի Մայր ցուցակի Ե հատորում, 1700 թվականի ժողովածուի նկարագրության մեջ, որտեղ բերված է Գրիգոր Վկայասերի 1101 թ. հիշատակարանը՝ նրա ցուցումով կատարած թարգմանության վերաբերյալ: Այստեղ սկզբում չի նշվում հեղինակի՝ Գրիգոր Վկայասերի անունը, այլ միայն՝ «Յաղագս յիշատակարանի գրոյս և թարգմանության սորին» վերնագիրը¹⁸: Տեքստի այն մասում, որտեղ Գրիգոր Վկայասերը նշում է իր տոհմի մասին, նաև այսպիսի հատված կա՝ «...գեղն ընտիրն լինելոյ յազգէ Արշակունի», իսկ մի քանի տող հետո հեղինակն ասում է՝ «բազում նեղութիւն կրեալ մեր յայլասեռ ազգաց հեթանոսաց եւ բնակաց»¹⁹:

Այստեղ նախ ինձ հետաքրքրեց, թե ի՞նչ գյուղի մասի կարող է լինել խոսքը, և երկրորդը՝ «բնակաց» բառը, քանի որ այն ծանոթ էր Անիի Ս. Առաքելոց եկեղեցու 1220 թ. մի արձանագրությունից, որտեղ քաղաքացիների մասին ասվում է՝ «...զփարթամաց եւ զաղքատաց, զեկաց եւ զբնակաց...»²⁰: Ժամանակին գրել եմ, որ այստեղ հավանաբար նկատի են ունեցել Անիի բազմամարդ բնակչության մեջ եկվորներին ու տեղաբնակներին²¹: Մինչ փորձում էի հասկանալ, թե հիշատակարանի հեղինակն ինչու է հալածանքի ենթարկվել հեթանոսներից ու տեղաբնակներից, որոշեցի նայել Ե-ԺԲ դարերի հիշատակարանների ժողովածուն, և պարզվեց, որ բնագրում ոչ մի գյուղի մասին էլ խոսք չկա, սկզբնագրում եղել

¹⁸ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, կազմեց՝ Օննիկ Եգանեան, Երևան, 2009, էջ 1227:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Գիվան հայ վիմագրության, պր. Ա, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 17: Նույն ձևակերպումն առկա է եկեղեցու մաս մեկ այլ վիմագրում (նույն տեղում, էջ 25):

²¹ Կ. Մաքևոյան, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. էջմիածին, 1997, էջ 25:

է «...ցեղընտիր լինելոյ յազգէ Արշակունի», իսկ մյուս մասում՝ «յայլասեռ ազգաց հեթանոսաց և յե(ր)կաբնակաց»²², որով ամեն ինչ իր տեղն է ընկնում (հասկանալի է, որ խոսքը քաղկեդոնականների մասին է):

Անճշտությունը հավանաբար գալիս է 1700 թ. ձեռագրի գրչից կամ նրա նախորինակից, բայց որպեսզի նման սխալագրությունները հետագայում գրականության մեջ տարածում չգտնեն, անհրաժեշտ է հիշատակարանի վերջում հղում անել համապատասխան սկզբնագիր հիշատակարանին: Գրիգոր Վկայասերի հիշատակարանն ավելի վաղ տպագրվել է Գ. Հովսեփյանի «Յիշատակարանք ձեռագրացում»²³, որտեղից էլ քաղել է Ա. Մաթևոսյանը և մուծել Ե-ԺԲ դարերի հիշատակարանների ժողովածուի մեջ: Անհրաժեշտ էր ձեռագրացուցակում, հիշատակարանի վերջում, մի փոքր ծանոթագրություն թողնել այս երկու գրքերից մեկում՝ սկզբնագրի հրատարակված լինելու մասին հղումով:

Մայր ցուցակի վրա աշխատող իմ գործընկերներին հուշեմ, որ այդպիսի իրավիճակ կարող է առաջանալ նաև 1608 թ. ժողովածուի (ՄՄ ձեռ. 5613) նկարագրություն ժամանակ, որի մեջ տեղ է գտել Հեթում Կոռիկոսցու 1292 թ. հիշատակարանի թերի ընդօրինակությունը (սկզբից պակասում է մի քանի թերթ), մինչդեռ այժմ Կոռիկոսցու ձեռագիրը հայտնաբերվել է, իսկ հիշատակարանը՝ հրատարակվել ամբողջությամբ²⁴:

6. Հիշատակարանային տվյալի ոչ լիարժեք օգտագործում

Հայտնի է, որ ամեն մի ձեռագրի հիշատակարան որոշ իմաստով նրա անձնագիրն է, համենայն դեպս, այնտեղ է նշված լինում մատյանի ստեղծման տեղն

²² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 135-136:

²³ Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 285:

²⁴ Քանի որ նախկինում բնօրինակը հայտնի չի եղել, այդ արժեքավոր հիշատակարանը, վերջնական մատյանից բաղկացած, դեռ 1948 թ. հրատարակել է Վ. Հակոբյանը (Վ. Հակոբյան, «Հեթում պատմիչի հիշատակարանը», ՀՍՍՏ ԳԱ Տեղեկագիր, 1948, № 10, էջ 66-73): Այդ ծավալով է հիշատակարանը նաև ԺԳ դարի հիշատակարանների ժողովածուի մեջ: Սակայն XX դ. վերջերին հայտնաբերվել է բուն ձեռագիրը (այժմ՝ Ս. Էջմիածին, ձեռ. 1250), և Շահեարտ. Ա.Նեմյանը 2006 թ. հիշատակարանը հրատարակել է ամբողջությամբ (տե՛ս Շ. Ա.Նեմյան, «Հայոց սպարապետ Հեթում պայլի յիշատակարանը», «Հայերէն Աստուածաշունչը» (հայագիտական ուսումնասիրություններ), Երևան, 2006, էջ 344-351): Բնագրական որոշ սրբագրումներով հիշատակարանը վերահրատարակել ենք մենք (Կ. Մաթևոսյան, Հեթում Պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը, Երևան, 2011, էջ 95-100): Անհրաժեշտ է ձեռագրացուցակում վերոնշյալ ուշ շրջանի ձեռագրի նկարագրության մեջ պակասավոր հիշատակարանը մեջբերելուց հետո ծանոթագրություն թողնել Հեթում Կոռիկոսցու բուն մատյանի գոյության ու հիշատակարանի ամբողջական հրատարակության առկայության մասին:

ու ժամանակը: Հետևաբար հիշատակարանային այդ տվյալները հատուկ ուշադրություն են արժանի: Մատենադարանի թիվ 2075 ձեռագրի գրչության վայրը նույնպես նշված է ըստ հիշատակարանի՝ «ԲԱՂԷՇ, ՆԱՐԵԿ, ՄՈՒՇ»²⁵, սակայն ուշադրություն չի դարձված այն հանգամանքին, որ այնտեղ երկրորդ վայրի համար նշված է՝ «ի Պոռայ Սուրբ Նարեկացոյ վանքն»²⁶: Նարեկ ասելով սովորաբար նկատի են ունենում Նարեկավանքը, բայց այս դեպքում խոսքը Բաղեշից 5-6 կմ հեռու գտնվող Պոռ կամ Բոռ գյուղի մոտակա մի վանքի մասին է, որը նաև Գրիգոր Նարեկացու անունով է կոչվել («ԲՈՒՌԱ Ս. ՀՈՂԱՆ... ԵՐԵՎՈՒՆ անվանվել է նաև Նարեկավանք կամ Նարեկացու վանք»)՝ Ի դեպ, այդ գրչության կենտրոնից մի շարք մատյաններ են պահպանվել, որոնցից երեքը Մատենադարանում են: Միով բանիվ, ձեռագրացուցակում այս մատյանի գրչության վայրը նշելիս անհրաժեշտ էր ավելի ուշագիտ լինել հիշատակարանի տվյալն օգտագործելիս և գրել՝ «Պոռի Սուրբ Նարեկացի»:

Մատենադարանի թիվ 1981 ժողովածուն նկարագրված է Մայր ցուցակի 9 հատորում: Մատյանի առաջին մասի գրչության տեղն ու ժամանակն անհայտ են: Նման դեպքերում առնվազն ժամանակի որոշման համար ուղենիշ են հնագրությունը և հիշատակարաններում եղած օժանդակ տվյալները: Այս դեպքում նման տվյալ կա՝ Դավիթ րաբունապետի («զերիցս երանեալ րաբունապետն Դավիթ») անվան հիշատակությունը: Հենց այդ հանգամանքը հաշվի առնելով Առն հաչիկյանը ձեռագիրը համարել է ԺԳ դարի և Գլաձորի (նոր տվյալներով նաև Վերին Նորավանքի) այս րաբունապետի կյանքի վերջին թվականը նկատի ունենալով՝ հիշատակարանը, համապատասխան ծանոթագրությամբ, հրատարակել 1343 թվականի ներքո²⁸: Բայց քանի որ Մայր ցուցակում, չգիտես ինչու, հիշատակարանների ժողովածուների տվյալներն ու հրատարակիչների ուղղորդումները հաշվի չեն առնվում, ձեռագրի ժամանակը նշված է ԺԳ դարը²⁹: Ճիշտ կլիներ գրել ԺԳ դարի առաջին կես, ինչպես նաև հիշատակարանի հատվածում հղել առաջին հրատարակությունը:

²⁵ Մայր ցուցակ, հ. 9, էջ 1353:

²⁶ Նույն տեղում, էջ 1358:

²⁷ Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Ա, Երևան, 1986, էջ 730:

²⁸ ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, էջ 335:

²⁹ Մայր ցուցակ, հ. 9, էջ 822:

Նույն դարի մեկ այլ հիշատակարանի համաձայն՝ մատյանը (ՄՄ ձեռ. 966) գրվել է «ի վանքս Վրժանայ»: Մայր ցուցակում գրչության վայր է նշված «Վրժանաց վանք» (տե՛ս նաև անվանացանկերը)³⁰: Սխալը թերևս չէր լինի, եթե ձեռագրի նկարագրողը ծանոթ լիներ ԺԴ դարի հիշատակարաններին՝ Լ. Խաչիկյանի հրատարակությանը, որտեղ Արագածոտն գավառի Վժանի (այժմ Ուջան) վանքից, նույն 1304 թվականի ներքո միանգամից երկու ձեռագիր ու հիշատակարան է նշված³¹:

Հիշատակարանային տվյալների և այլ նշումների նկատմամբ անուշադրութունը սխալների է հանգեցրել նաև որոշ հատորների անվանացանկերում: Օրինակ՝ Մայր ցուցակի Գ հատորում Հայոց Բագրատունի թագավորների շարքն ավելացել է մեկով, հայտնվել է «Գագիկ Գ Բագրատունի, թագավոր Հայոց»³², որի դիմաց նշված էջերից առաջինում խոսքը Գագիկ Ա Բագրատունու մասին է, իսկ երկրորդում՝ Գագիկ Արծրունու: Նույն հատորի տեղանունների ցանկում «Անի Դարանաղեաց» անվան դիմաց մատնանշված չորս էջից այդ բնակավայրին է վերաբերում միայն առաջինը, իսկ մյուս երեքում հիշատակված է Շիրակի Անին³³:

Ինչպես տեսնում ենք, Մայր ցուցակում հիշատակարանների հրատարակության գործում ոչ միայն առանձին թերութուններ կան, այլև սկզբունքային բնույթի բացթողումներ ու սխալներ: Փաստորեն, Ձեռագրագիտության բաժնի (մինչև 2019-ի ապրիլը՝ «Մայր ցուցակի և ձեռագրագիտության բաժին») աշխատողներն այնքան էլ «կատարելապէս» չեն տիրապետում հիշատակարանների մշակման «գրեթէ բոլոր նրբութիւններին»: Շատ բարձր գնահատելով այդ բաժնի կատարած մեծածավալ աշխատանքը՝ կարծում եմ, որ այն պետք է կարողանա քննադատաբար վերաբերվել նաև սեփական գործին՝ փորձելով Մայր ցուցակի առաջիկա հատորներում հիշատակարանների հրատարակության ժամանակ առնվազն չկրկնել վերը մատնանշված սխալների տեսակները:

Նշված թերութունների մի մասը մտորելու տեղիք է տալիս նաև հետևյալ հարցի առնչությամբ: Հայտնի է, որ Մատենադարանում, հիմնականում տեղի հավաքածուի հիման վրա, շուրջ 40 տարվա ընթացքում (1950-1988 թթ.) հայերեն ձեռագրերի հիշատակարանների 9 ստվար հատորներ են հրատարակել հայ ձեռագրական մշակույթի քաջագիտակ մասնագետներ Լևոն Խաչիկյանը, Արտաշես Մաթևոսյանը և Վազգեն Հակոբյանը: Սակայն Մայր ցուցակի հատորներից

³⁰ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, կազմեց՝ Օննիկ Եգանեան, Երևան, 2007, էջ 1502, 1504, 1951, 1989:

³¹ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, էջ 22, 28:

³² Մայր ցուցակ, հ. Գ, էջ 1524:

³³ Նույն տեղում, էջ 1489:

ընթերցողը բոլորովին այն տպավորությունը չի ստանում, որ դրանք հիշատակարանների հրատարակության հարուստ ավանդույթներ ունեցող հաստատության ծնունդ են: Ձեռագիր նկարագրող յուրաքանչյուր ոք ներկայանում է որպես տվյալ մատյանի հիշատակարանների առաջին բացահայտող, առաջին վերծանող ու հրատարակիչ: Մինչդեռ այդ հիշատակարանները մեծ մասամբ հրատարակված են: Պետք է ասել, որ Մայր ցուցակի Ա-ե հատորներում հիշատակարանների ժողովածուներն ընդհանրապես չեն նշված, որն էական բացթողում է եղել: Զ հատորից սկսած այս մոտեցումը փոխվել է, միայն թե ոչ բոլոր դեպքերում են հիշատակարանների հրատարակությունները հղվում: Կարծում եմ, որ Մայր ցուցակում տեղ գտած հիշատակարանների համար պետք է անպայման նշվեն (հղվեն) դրանց առաջին կամ նախորդ հրատարակությունները, ինչպես նաև հաշվի առնվեն նախորդ հրատարակիչների կատարած առավել կարևոր գիտարկումները:

Դրական եմ համարում, որ Գրախոսությունն առիթ ստեղծեց խոսելու Մայր ցուցակում հիշատակարանների հրատարակություններում տեղ գտած թերությունների մասին: Դրանք, ի դեպ, ավելի ծանրակշիռ են, քան այն վրիպում-վրիպակները, որոնք տեղ են գտել ԺԴ դարի հիշատակարանների Ա հատորում:

Ինչ վերաբերում է գիտաշխատողների թվով Մատենադարանի ամենամեծ՝ Ձեռագրագիտության բաժնի՝ հիշատակարանների ժողովածուների հրատարակությանմբ զբաղվելու ցանկությունը, ապա կարծում եմ, որ դրա համար ոչ մի խոչընդոտ չկա: Կարելի է, տնօրինության հետ համաձայնեցնելով, նոր հայտնաբերված ձեռագրական միավորներով ու հրատարակությունների նյութերով լրացնել ժե դարի հիշատակարանները, ամբողջացնել ժե դարի հիշատակարանները՝ դարավերջի 40 տարվա նյութը հրատարակելով, ձեռնարկել ժԸ դարի հիշատակարանների հավաքման հսկայական աշխատանքը: Միևնույն ժամանակ շատ օգտակար կլինի, եթե Ձեռագրագիտության բաժինը, հիմնական գործառույթ ունենալով Մայր ցուցակի հրատարակությունը, վերջապես ձեռնարկի նաև Ձեռագրատանը պահվող բազմահատոր անտիպ ձեռագրացուցակների հրատարակությունը, որոնք հիշատակարանային և ձեռագրագիտական հսկայական նյութ են պարունակում:

Այժմ մի քանի խոսք բուն Գրախոսության մասին՝ որպես խորհուրդ իմ երիտասարդ գործընկերներին: Ընդհանրապես, գրախոսությունը գիտական աշխատության այն տեսակն է, որը հեղինակից պահանջում է առավելագույն ուշադրություն: Քանի որ գրախոսվող աշխատության մեջ սովորաբար նշվում են թերություններ, ապա գրախոսությունը պետք է հնարավորինս զերծ լինի դրանցից:

Նախ ուզում եմ ուշադրություն հրավիրել այն բանի վրա, որ եթե զուգահեռ սյունակներում բերվում են գրախոսվող գրքի տեքստը և ձեր ուղղումները, ապա պիտի չափազանց բժախնդիր լինել: Գրախոսության մեջ ունեք նման մի հատված, ուր տպագրված հիշատակարանի «ի հալալ [ընչից] իմոց» բառերը «Մեր ընթերցումը» խորագրի ներքո բերվել է «ի հալեալ [ը]ն[չից] իմոց» ձևով (նկ. 4): Ենթադրելի է, որ ուզում եք ասել, թե տպագրում գրչի սխալագրությունը չի նկատվել, որը «հալալ»-ի փոխարեն գրել է «հալեալ»: Բայց այդ դեպքում պիտի համապատասխան ձևով ցույց տրվեր, որ «ե» տառը սխալ է, և այն բուն տեքստից տարբերվող (թեք կամ ուղիղ) ձևով գրվեր: Այլապես, այս տեսքով, ստացվում է, որ «ի հալալ ընչից իմոց» հայտնի ձևակերպման մեջ ճիշտ էք հա-

Ժ.Ռ. դ. յիդ-բ, Ա., էջ 179	Մեր ընթերցումը
313ա Փառք ամենայսուրբ երրորդ [դութեանն]՝ Հար եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյն յաւիտեանս:	313ա Փառք ամենայսուրբ երրորդ [դութեանն]՝ Հար եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյն յաւիտեանս:
Արդ, ես՝ տէր Մաաթեոս , որ առի զՇարակնոցս [ԶԾԹ]՝ ի հալալ [ընչից] իմոց յիշատակ ինձ եւ ծն[ողաց] ///	Արդ, ես՝ տէր Մատթէոսս, որ առի զՇարակնոցս [ԶԾԹ.] ի հալեալ [ը]ն[չից] իմոց յիշատակ է ինձ եւ ծն[ողաց]

Նկ. 4. Գրախոսության հատված, «Բանբեր Մատենադարանի», 2019, № 28, էջ 403:

մարում «հալեալ» գրելաձևը, որը սխալ է:

Գրախոսվող գիրքը հղելով գրում էք «էջ Զ-Թ.» (էջ 393), «էջ Ժ.» (էջ 394) և այլն: Սակայն գրքում նման էջակալում գոյություն չունի: Այնտեղ կան էջ 6-9 և էջ VI-IX, էջ 10 և էջ X և այլն: Ընդունված կարգ է, որ հղում կատարելիս նշվում է էջակալման այն տեսակը, որն օգտագործված է տվյալ հրատարակության մեջ: Այն փոխելը ցանկության կամ նախասիրության հարց չէ, պարզապես անճշտություն է: Ի դեպ, Գրախոսության մեջ մի տեղ, թերևս վրիպմամբ, ճիշտ է գրված՝ «էջ III» (էջ 402):

Նույնպիսի կամայական մոտեցում է առկա նաև Գրախոսության հղումներում, որտեղ բոլոր գրքերի անունները համատարած գրված են դասական ուղղագրությամբ: Հանրահայտ է, որ եթե գիտական աշխատության կամ ատենախոսության մեջ հեղինակը, օրինակ՝ ԺԹ դարում տպված գրքի վերնագիրը գրում է արդի ուղղագրությամբ, ապա այն համարվում է սխալ: Ընդունված կարգ գոյություն ունի՝ գրքի հեղինակի անունն ու վերնագիրը հղվում է ըստ տվյալ հրատարակության տիտղոսաթերթի՝ պահպանելով ուղղագրությունը: Ավելացնեմ,

որ տողատակի հղումներում գրքերի տվյալների ներկայացման մեջ միանմանության կարգը չի պահպանված³⁴:

Գրախոսության մեջ Լ. Խաչիկյանի 1950 թ. հրատարակության անվանումը համառոտված է «ԺԴ. դ. յիշ-ք.» ձևով (էջ 390, տղտկ. 1, էջ 391 և այլուր), իսկ գրախոսվող գրքինը՝ «ԺԴ. յիշ-ք, Ա.» (էջ 393, 394 և այլուր), որով կիրառվում է «յիշատակարանք» գրաբարյան կազմությանը բառը, որպիսին այդ գրքերի վերնագրերում չկա:

Գրախոսության ուղղագրությունը Ձեր ընտրությունն է: Բայց գրում եք «թե» (էջ 390), «պետք» (էջ 394), «կետադրութեան» (էջ 403), պետք է լինի՝ թէ, պէտք, կէտադրութեան, նաև՝ «Յնիկ եգանեան» (էջ 398), ճիշտը՝ «Յնիկ եգանեան» (կարելի էր տեսնել 391 էջի տողատակում): Գրախոսության մեջ կարգում ենք՝ «կազմուում», «թուայնացուում» (էջ 391), այնուհետև՝ «յարաբերուում» (էջ 394), հետո՝ «հրատարակուում», «թուարկուում» (էջ 395), «թուում» (էջ 399), քիչ անց՝ «գործադրուում» (էջ 405) և այլն: Իհարկե, երկու ձևն էլ («ուում» կամ «ուում»), կիրառելի են, բայց հողվածում պետք է ընտրել մեկը, այլպես անգամ միևնույն էջում տեսնում ենք նույն բառի «գրուում է» և «չեն գրուում» գրելաձևերը (էջ 404):

Գրախոսության մեջ առկա են տարբեր կարգի այլ անճշտություններ, անփույթ կազմված նախադասություններ և այլն³⁵: Մատենադարանի ձեռագրերը նշելիս հիմնականում գրված է՝ «ՄՄ» (էջ 400, 402, 403), բայց նաև՝ «ՄՄ ձեռ.» (էջ 393) կամ՝ «ձեռ. ՄՄ» (էջ 404): Սա մտածել է տալիս, որ Գրախոսության վրա թերևս երկուսից ավելի հեղինակ է աշխատել և ամեն մեկը գրել է իր ձևով: Տարօրինակ է նաև իմաստային սխալի առկայությունը անգլերեն և ռուսերեն ամփոփումներում³⁶:

³⁴ Գրախոսության 1-ին և 2-րդ տողատակերում նշված են հղված գրքերի հրատարակչությունները (էջ 390), 3-րդ տողատակի 8 գրքերից ոչ մեկը նման տվյալ չունի (էջ 391): Հաջորդ տողատակերում նույն պատկերն է, որոշ գրքերի հրատարակչության անունները նշված են, մյուսներինը՝ ոչ:

³⁵ «...գրքին յաջորդելու են ԺԴ. դարի յիշատակարանների ես ետե՛հ հատոր...» (էջ 393), կամ պետք է լինի «յաջորդելու է» կամ՝ «ետե՛հ հատորներ»: «ՌԳՃԻԵ. 1325... Ի թիւ Հայոց ԶԶ. 1321» (էջ 400): Այստեղ արաբական թվանշաններով թվերը պետք է վերցվելին փակագծի մեջ: Ի դեպ, տողատակում հղված է Մայր ցուցակի Բ հատորը (էջ 1268), որտեղ դրանք փակագծերում են: Գրախոսվող գրքի հրատարակչությունը նշված է «Նայիրի» հրատ. (էջ 392), պետք է լինի «Նայիրի» հրատ.: Կան պարզ վրիպակներ՝ «ետեում է» (էջ 398) «հանգամանա՛հ» (էջ 405):

³⁶ Ամփոփումների մեջ գրված է. “In 2018 the long-awaited first volume was published, containing the colophons of the first quarter of the fourteenth century, several times more numerous than those comprising the first edition”, “В 2018 году вышел в свет долгожданный первый том, содержащий колофоны первой четверти 14-го века,

Իհարկե, վերը նշված թերությունների մի մասին կարելի էր նաև շանդրա-դառնալ, դրանք համարելով մանրուք, բայց այս դեպքում դա արդարացված է, քանի որ սովորական շարադրանքում տարբեր կարգի բազմաթիվ անճշտու-թյուններով հագեցած Գրախոսության նշանակետն է դարձել 640 էջանոց մի գիրք, որի շուրջ 90 տոկոսը գրաբարով բնագիր է:

1950 թ. Լևոն Խաչիկյանի հրատարակած «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» հատորյակում դարի առաջին քառորդի 253 հիշատակա-րանի դիմաց 2018 թ. լույս տեսած ժողովածուն ընդգրկում է 459 հիշատակա-րան, որոնց բնագրերում կատարվել են նաև բազմաթիվ լրացումներ ու ճշգրտումներ: Այն հսկայական աղբյուրագիտական նյութ է պարունակում և օգ-տակար է առաջին հերթին պատմաբանների, ինչպես նաև բանասերների, լեզ-վաբանների, արվեստաբանների, ազգագրագետների և ընդհանրապես միջնա-դարագետների համար (այս մասին ես բազմաթիվ դրական արձագանքներ եմ լսել): Իհարկե, ցավալի է, որ այնտեղ տեղ են գտել նաև Գրախոսության մեջ նշված թերություններն ու վրիպակները, սակայն, կատարված աշխատանքի ծավալի ու արժեքի համեմատ, դրանք, մեծ հաշվով, մանր բաներ են:

Ուզենք թե շուգենք, այս խնդիրը նաև բարոյական կողմ ունի, քանի որ նրա բոլոր մասնակիցները նույն հաստատության Մեսրոպ Մաշտոցի անվան Մատե-նադարանի աշխատակիցներ են, այստեղ է հրատարակվել գիրքը և գրվել Գրա-խոսությունը: Այդ գրության մեջ հարց կա Ա. Ղազարոսյանին. «Ինչո՞ւ է ինքը նոյն յիշատակարանը յապաւուած տպագրել» (էջ 397): Բայց մի ուրիշ հարց է առաջանում, արդյոք հնարավոր չէ՞ր, գործի շահից ելնելով կամ թեկուզ գոր-ծընկերոջ ավագությունը հարգելով, պարզապես այդ մասին բանավոր հարցնել նրան: Գուցե պատասխանը բավարարեք Գրախոսության հեղինակներին, և նրանք այլևս հարկ չհամարեին այդ կետի մասին գրել: Եվ ընդհանրապես, կար-ծում եմ, որ նույն հիմնարկում ծագած նման գիտական հարցերը նպատակա-հարմար է քննարկել կլոր սեղանի շուրջը և ոչ թե մամուլի էջերում:

Ուզում եմ ավելացնել, որ Լիլիթ Հովսեփյանը և Դավիթ Ղազարյանը Մատե-նադարանի խոստումնալից գիտաշխատողներից են, գիտական աստիճան ունե-ցող և անձամբ ինձ համար համակրելի մարդիկ: Եվ մի էական նկատառում. եթե

число которых в несколько раз превышает вошедшие в первое издание” (էջ 406): Նոր հրատարակության մեջ հիշատակարանների թիվը նախորդ հրատարակությանը չի գերա-զանցում «մի քանի անգամ» (ինչպես նշված է ամփոփումներում): Այստեղ Լ. Խաչիկյանի հրատարակած 253 հիշատակարանի դիմաց տեղ է գտել 459 միավոր: Այս տվյալները նշված են գրքի սկզբում դրված իմ խոսքում (ԺԳ, մասն Ա, էջ II): Ըստ այդմ՝ նոր հրատարակության մեջ ավելացել է 206 միավոր, որը հնի համեմատ անգամ կրկնակի չէ:

իմ հրապարակումը որևէ մեկի դժգոհությունն առաջացնի, խնդրում եմ անմիջապես հիշել, որ սա ընդամենը պատասխան է, կամ, այլ կերպ ասած, հենց Գրախոսությունն է առիթ և նյութ տվել այս գրության համար:

Գրքում իր գրած առաջաբանի վերջում Արփենիկ Ղազարոսյանը բազմաթիվ անուններ թվարկելով շնորհակալություն է հայտնում աշխատանքի ժամանակ այս կամ այն կերպ իրեն աջակցած գործընկերներին: Նաև երախտագիտություն է արտահայտում հիշատակարանների հեղինակ միջնադարյան գրիչներին՝ նա իր խոսքը եզրափակում է ընթերցողին ուղղված նրանց իսկ բառերը կրկնելով «Սխալանաց անմեղադիր լերուք, զի կար մեր այսչափ էր» (ԺԳ, մասն Ա, էջ XII): Հիշատակարաններում բանաձևային արժեք ստացած այս խոսքերը, պարզ խնդրանք լինելուց բացի, նաև բարոյախոսական իմաստ ունեն: Իհարկե, խոսքը միջնադարյան բարոյախոսության մասին է, որը մեր օրերում թերևս այնքան էլ պահանջված չէ: